


Մայրաքաղաքում բնակարանների գները վերջապես բռնել են կայունացման ուղին

2009թ.-ի հունիսին Երևանում վերջին ամիսների ընթացքում առաջին անգամ նկատվեց բնակարանների գների ստաբիլացում: Չնայած բնակարանների գները շարունակում են նվազել, բայց արդեն հունիսին՝ մայիսի համեմատ գնային ինդեքսի նվազումը դրսևորվեց շատ փոքր տոկոսներով, օրինակ Երևանում 1 քմ բնակելի տարածքի միջին գինը 2009թ.-ի հունիսին գրանցվել է 259,300 դրամ, որի ցուցանիշը 2009թ.-ի մայիսի համեմատ փոքր է ընդամենը 0.1%-ով: Սակայն Կենտրոնում, Աջափնյակում, Ավան և Էրեբունի համայնքներում սույն թվականի հունիսին նախորդ ամսվա համեմատությամբ նկատվել է բնակարանների գնային աճ՝ կրկին 1%-ով: Բայց եթե փորձենք համեմատել բնակարանների 2009թ.-ի հունիսին գրանցված գները 2008թ.-ի հունիսին գրանցված գների

Համայնք	2008 Հունիսի ՀՀ դրամ	2009 Հունիսի ՀՀ դրամ	2009 Մայիսի ՀՀ դրամ
Կենտրոն	487,000	462,800	461,300
Արաբկիր	418,500	350,400	354,400
Զեյթուն	309,600	271,700	274,900
Նոր Նորք	281,700	222,600	225,600
Շենգավիթ	285,000	235,500	239,000
Դավթաշեն	295,000	250,900	252,600
Սալաթիա	269,700	218,600	218,700



հետ, ապա կտեսնենք նկատելի տարբերություն: Սույն թվականի հունիսին 2008թ.-ի հունիսի համեմատ բնակարանների գների մաքսիմալ նվազումը նկատվել է Նոր Նորքում՝ 21%, իսկ մինիմալ նվազումը հանդիպել է Կենտրոնում՝ 5%-ով:

Ինչ վերաբերվում է կիսամյակային ամփոփման, ապա կարող ենք ասել, որ 2009թ.-ի առաջին կիսամյակում նախորդ կիսամյակի համեմատությամբ 1քմ բնակելի տարածքների գները նվազել են 9%-ով, իսկ 2008թ.-ի առաջին կիսամյակի հետ համեմատած նվազել է 7%-ով:

Պիկ Ռիելթին անհրաժեշտ են

▲ Վարձակալության համար

երկուսից երեքսենյականոց եվրոպերանորոգված բնակարաններ Երևան քաղաքի կենտրոնում, մինչև 2,000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ ամսեկան վարձավճարով: Գերադասելի է բնակարան նորակառույց շենքում:



▲ Վարձակալության համար ամենաքիչը երեքսենյականոց առանձնատուն, լավ վերանորոգված մինչև 3,000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ ամսեկան վարձավճարով:



▲ Վաճառքի համար, երկուսից երեք հարկանի առանձնատուն, ընդարձակ հողատարածքով, մինչև 600,000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ արժողությամբ:



FOR RENT



FOR SALE



Վարձակալության և վաճառքի հատուկ առաջարկներ ՊԻԿ ՌԻԵԼԹԻԻ կողմից

FOR RENT



Գերազանց բազմանպատակային օգտագործման եռահարկ շինություն գրասենյակային և առևտրային տարածքներով Երևանի փոքր կետրոնում՝ Հերացի փողոցի վրա, 679 քմ ընդհանուր մակերեսով: Վայելէք Ձեր աշխատանքային օրը բարձր դասի գրասենյակում:

Երեքսենյականոց, 125քմ ընդհանուր մակերեսով յուրահատուկ բնակարան Երևան քաղաքի կենտրոնում՝ Կասկադի այգու հարևանությամբ : Լիովին կահավորված և ժամանակակից վերանորոգումով բնակարանն օժտված է ջեռուցման և օդափոխության համակարգերով և ինտերնետ կապով:



Ա-դասի, 147քմ ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածք Հյուսիսային պողոտայում: Գրասենյկն օժտված է ժամանակակից ջեռուցման և օդափոխության համակարգերով, արագընթաց ինտերնետ կապով և անվտանգ ստորգետնյա ավտոկայանատեղիով:



Գերազանց բազմանպատակային օգտագործման հողատարածք՝ տեղակայված Երևանի փոքր կետրոնում՝ խոշոր գործարար կենտրոնների և պետական գործակալությունների անմիջական հարևանությամբ, որի վրա հաստատված է գրասենյակային կառույցի նախագիծ:



Եռահարկ շքեղ առանձնատուն 450քմ ընդհանուր մակերեսով Բաղրամյան փողոցի վրա: Լիովին կահավորված և վերանորոգված 7 սենյականոց տունն ունի ջեռուցման, օդափոխության և անվտանգության համակարգեր, ինտերնետ կապ, ինչպես նաև լողավազան և շոգեբաղնիք:



Հարմարավետ երկսենյականոց բնակարան մայրաքաղաքի սրտում՝ Թամանյան փողոցի վրա, հիասքանչ անկրկների տեսարանով: Հիանալի վերանորոգված և լիովին կահավորված բնակարանը ծածկում է 82քմ, ունի ջեռուցման, օդափոխման համակարգեր և ինտերնետ կապ:

